ԵԴ/0936/01/22
(ՀԿԴ/0090/01/22)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 ապրիլի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Ելիզավետա Դանիելյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի հունիսի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Անուշ Մարտիրոսի Գարսանցյանի վերաբերյալ երկու դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Անի Աշոտի Մխիթարյանի

վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով, Ալբերտ Սոսի Վիրաբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով, Լենա Հրաչիկի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և մյուսների վերաբերյալ թիվ 58230719 (ԵԴ/1036/01/22) քրեական գործը:

1.1. 2022 թվականի հունիսի 9-ին թիվ ԵԴ/1936/01/22 քրեական գործն ընդունվել է վարույթ և 2022 թվականի հունիսի 24-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 6-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 14-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0090/01/22 (ԵԴ/0936/01/22) քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 29-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 7-ին որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 28-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Անուշ Գարսանցյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, այն բանի համար, որ նա *«(…) Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելով իտալական «Արկոբալենո Օնլուս», «Ֆամիլիա Ինսիեմե Օնլուս» և «Անպաս Օնլուս» կազմակերպությունների ներկայացուցչի գործառույթներ, 2005 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարբեր բանկերում իր անվամբ բացված բանկային հաշիվներին, այդ թվում՝ «Արդշինբանկ» ՓԲ ընկերության թիվ 2470103413180020 բանկային հաշվին, կազմակերպված խմբի վերջնական նպատակին հասնելու՝ ապօրինի օգուտներ ստանալու համար նույն կազմակերպություններից սկսել է ստանալ գումարներ: 2015-2016 թվականների ընթացքում «Ֆամիլիա Ինսիեմե Օնլուս» կազմակերպության միջոցով Իտալիայի Հանրապետության քաղաքացիներ Անդրեա Զենտրա և Դանիելլա Ռոսսի, Ռիկարդո Բրաջջիո և Էնրիկա Կամելլինի, Անտոնիո Մազիա և Ալեսսանդրա Ռոկկու, Ռաֆֆաելե Ֆալոնե և Էմմանուելե Ռաչինելլի, Իզակո Իցցո և Կատրիա Պավոնի, Անդրեա Պաչիֆիչի և Լուչիա Դել Կիառո զույգերի կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման գործընթացի իրականացման համար ստացել է ընդհանուր 104.000 եվրո: Նշված գումարից առանձնապես խոշոր չափերով՝ 45.978,53 եվրոյին համարժեք 24.384.780,68 ՀՀ դրամն օրինականացնելու՝ դրա հանցավոր ծագումն ու տեղաշարժը թաքցնելու նպատակով, որպես փոխառություն է հանձնել իր հետ փոխկապակցված «Բելլա Իտալիա ֆուդ», «Իտալգուստո» ՍՊ ընկերություններին, իսկ ևս 10.000 եվրո գումարին համարժեք 5.385.100 ՀՀ դրամի հանցավոր ծագումն ու տեղաշարժը թաքցնելու նպատակով այն ձևակերպել է որպես «Իտալգուստո» ՍՊ ընկերությանը որդեգրումների գործընթացի բնագավառում գործունեություն ծավալող, իր մտերիմ Դիաննա Գրիգորյանի կողմից տրամադրված փոխառություն (…)»*[1]:

5.1. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Անի Մխիթարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 66, թերթ 165-166:

հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ հետևյալ արարքների համար. *«(…) Կազմակերպված խմբի անդամներ՝ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Միսիթարյանը և նույն գործակալության ապոստիլի և միջազգային պայմանագրերի բաժնի պետ Ալբերտ Վիրաբյանը, տեղեկացված լինելով, որ յուրաքանչյուր երեխայի որդեգրման համար Անուշ Գարսանցյանին փոխանցվում է Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման գործընթացի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ծախսերի, ինչպես նաև գործընթացների իրականացման համար առաջացած անհրաժեշտ այլ ծախքերի համար պահանջվող գումարների չափերից ակնհայտորեն բարձր գումարներ, գիտակցելով, որ Անուշ Գարսանցյանը ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով վաճառում է երեխաներին, «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիայի շրջանակներում գործող ՀՀ կենտրոնական մարմնի անունից ստորագրել են Իտալիայի քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման համար էական նշանակություն ունեցող՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացություն՝ այդ կերպ վերացնելով կազմակերպված խմբի կողմից ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխաների վաճառքն ավարտին հասցնելու խոչընդոտներ, ստեղծելով հնարավորություն՝ կազմակերպված խմբի ղեկավար Անուշ Գարսանցյանի կողմից երեխաների վաճառքն ավարտին հասցնելու համար: Ալբերտ Վիրաբյանն ապահովել է նաև երեխայի վաճառքը հնարավորինս շուտ իրականացնելու համար վերջինիս վերաբերյալ փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տվյալների ներառումը:*

Միևնույն ժամանակ Անի Միսիթարյանը, 2017 թվականի մայիսի 2-ից զբաղեցնելով ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության պետի պաշտոնը և ՀՀ արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի՝ նույն թվականի մայիսի 22-ի թիվ 277-Ա հրամանի համաձայն՝ հանդիսանալով օտարերկրյա որդեգրումների բնագավառում ՀՀ Կենտրոնական մարմնի

լիազորություններն իրականացնող ստորաբաժանման ղեկավար, տեղեկացված լինելով օտարերկրյա կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում Կոնվենցիայի 12-րդ հոդվածի անհամապատասխանությամբ գործունեություն իրականացնելու մասին, ի պաշտոնե օժտված լինելով վերոնշյալ գործընթացների նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություններով, հանդիսանալով պաշտոնատար անձ, գործելով խմբի կազմում, խմբային շահերից ելնելով, դիտավորությամբ չի կատարել իր ծառայողական պարտականությունները՝ քայլեր չի ձեռնարկել «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրումների ոլորտում համագործակցության մասին» Հագայի կոնվենցիայի պահանջներին չհամապատասխանող՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող իտալական «Արկոբալենո Օնլուս», «Անպաս Օնլուս» և «Ֆամիլիա Ինսիեմե Օնլուս» կազմակերպությունների գործունեությունը Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ նշված կազմակերպությունների գործունեության նկատմամբ չի իրականացրել որևէ հսկողություն և կազմակերպությունները շարունակել են առանց թույլտվություն ստանալու, գործունեության թույլտվության երկարացման համապատասխան ընթացակարգ անցնելու գործունեություն իրականացնել օտարերկրացիների կողմից ՀՀ քաղաքացի որդեգրելու բնագավառում: Որդեգրման գործընթացի նախորդող փուլում վերը նշված իտալական կազմակերպություններից ստացել է ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման համար սահմանված՝ որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների կողմից կազմակերպություններին վճարված գումարի չափի և յուրաքանչյուր որդեգրման դեպքում նշված գումարը Անուշ Գարսանցյանին փոխանցելու փաստը հավաստող տեղեկություններ: Տեղյակ լինելով, որ յուրաքանչյուր երեխայի որդեգրման համար վերջինիս փոխանցվում է 25.000 եվրո, ինչն ակնհայտորեն բարձր է Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման գործընթացի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ծախսերի, ինչպես նաև գործընթացների իրականացման համար առաջացած անհրաժեշտ այլ ծախքերի համար պահանջվող գումարների չափերից, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի

գրանցման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1919-Ն որոշման (ուժը կորցրել է 2020 թվականի մարտի 12-ին) 9-րդ կետի «ը» ենթակետով, ըստ որի՝ «Գործակալության կենտրոնական մարմինը «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման հետ կապված լիազորություններ», ինչպես նաև նույն որոշման 15-րդ կետի «ա» և «զ» ենթակետերով, այն է՝ «Գործակալության պետը...ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար, ապահովում է նախարարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին», սահմանված իր լիազորությունների շրջանակներում քայլեր չի ձեռնարկել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները, այն է՝ «Կենտրոնական մարմիններն անմիջականորեն, կամ պետական մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները որդեգրման կապակցությամբ՝ չարդարացված ֆինանսական կամ այլ օգուտի կանխարգելման և Կոնվենցիայի նպատակների հակասող ցանկացած պրակտիկայի կանխման համար» իրականացնելու ուղղությամբ, ինչը հանգեցրել է Կոնվենցիայի 32-րդ հոդվածի խախտման, ըստ որի՝ «Ոչ ոք չպետք է ստանա չարդարացված ֆինանսական կամ այլ օգուտ օտարերկրյա որդեգրմանը վերաբերող գործունեությունից: Կարող են սահմանվել կամ վճարվել միայն ծախսերը և ծախքերը, ներառյալ որդեգրման գործընթացում ներգրավված անձանց խելամիտ մասնագիտական հոնորարները: Որդեգրման գործընթացում ներգրավված մարմինների ղեկավարները, վարչարարները և ծառայողները չեն ստանում մատուցված ծառայությունների որակից անհիմն բարձր վարձատրություն»: Անի Միհիթարյանը, գործելով խմբի կազմում, խմբային շահերից ելնելով, ստորագրել է Իտալիայի մի շարք քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացություններ, հաստատել է նաև Ալբերտ

Վիրաբյանի կողմից կազմված, որդեգրման գործընթացի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ «Իտալիայի Հանրապետության քաղաքացիներ Ֆեդերիկո Տատա Նարդինիի և Սիլվիա Պիկկալուգայի կողմից ՀՀ քաղաքացի Արեգ Ավետիսյանի որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին» եզրակացություն՝ դրա հիմքում և բովանդակությունում դնելով կեղծ տեղեկություններ՝ Ֆեդերիկո Տատա Նարդինիի և Սիլվիա Պիկկալուգայի կողմից նույն մանկատան մեկ այլ սան, 2018 թվականի փետրվարի 12-ին մահացած Կարեն Հովհաննիսյանին տեսակցելու և նրան ընտրելու վերաբերյալ դիմումները՝ այդ կերպ հնարավոր դարձնելով օտարերկրյա քաղաքացիների կողմից Արեգ Ավետիսյանի որդեգրումը: Միաժամանակ կազմակերպված խմբի ղեկավար Անուշ Գարսանցյանը կազմակերպված խմբի մյուս անդամների՝ այդ թվում Անի Միհիթարյանի հետ համատեղ, վերջինիս պաշտոնավարման ժամանակահատվածում՝ 2017-2019 թվականների ընթացքում, շարունակել է կատարել ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ՀՀ քաղաքացի, որդեգրման ենթակա երեխաների վաճառքը:

Բացի այդ, ՀՀ կառավարության «Որդեգրման կարգը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 2010 թվականի մարտի 18-ի թիվ 269-Ն որոշման 64-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին:

Որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկությունների գերակշիռ մասը ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալություն են ներկայացվել իտալերեն: Անի Միհիթարյանը, հանդիսանալով ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության պետ, գործելով խմբի

կազմում, ելնելով խմբային շահերից, չի իրականացրել ՀՀ կառավարության վերը նշված որոշման 64-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը՝ չի պահանջել համապատասխան տեղեկությունները ներկայացնել հայերեն, ինչի արդյունքում դրանք ստանալը կրել է ձևական բնույթ, իսկ Հայաստանի Հանրապետությունը զրկվել է որդեգրված երեխաների կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկությունները ստուգելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան գործառույթներ և գործողություններ իրականացնելու, որդեգրման բնագավառում գործունեություն իրականացնող իրավական կազմակերպությունների գործունեությանը գնահատական տալու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այդ գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու հնարավորությունից:

Նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին՝ խաթարվել է որդեգրումների օրինական գործընթացը, հեղինակազրկվել է Կենտրոնական մարմինը և արատավորվել վերջինիս բարի համբավը (…)»[2]:

5.2. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Ալբերտ Վիրաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ հետևյալ արարքների համար. *«(…) Կազմակերպված խմբի անդամներ՝ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Միսիթարյանը և նույն գործակալության ապոստիլի և միջազգային պայմանագրերի բաժնի պետ Ալբերտ Վիրաբյանը, տեղեկացված լինելով, որ յուրաքանչյուր երեխայի որդեգրման համար Անուշ Գարսանցյանին փոխանցվում է Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման գործընթացի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ծախսերի, ինչպես նաև գործընթացների իրականացման համար առաջացած անհրաժեշտ այլ ծախքերի համար պահանջվող գումարների չափերից ակնհայտորեն բարձր գումարներ, գիտակցելով, որ Անուշ Գարսանցյանը ստանձնողի ինամքին հանձնելու նպատակով վաճառում է երեխաներին,*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 69, թերթ 136-139:

«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիայի շրջանակներում գործող ՀՀ կենտրոնական մարմնի անունից ստորագրել են Իտալիայի քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման համար էական նշանակություն ունեցող՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացություն՝ այդ կերպ վերացնելով կազմակերպված խմբի կողմից ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխաների վաճառքն ավարտին հասցնելու խոչընդոտներ, ստեղծելով հնարավորություն՝ կազմակերպված խմբի ղեկավար Անուշ Գարսանցյանի կողմից երեխաների վաճառքն ավարտին հասցնելու համար: Ալբերտ Վիրաբյանն ապահովել է նաև երեխայի վաճառքը հնարավորինս շուտ իրականացնելու համար վերջինիս վերաբերյալ փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տվյալների ներառումը:

Միևնույն ժամանակ Ալբերտ Վիրաբյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները՝ գործելով խմբի կազմում, խմբային շահերից ելնելով, չի կատարել իր ծառայողական պարտականությունները: Մասնավորապես՝ 2018 թվականի սեպտեմբերին, խախտելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 269-Ն որոշման 35-րդ կետի պահանջները, այն է՝ «որդեգրման երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները դիմում են կենտրոնական մարմին», նույն որոշման 47-րդ կետի պահանջները, այն է՝ «որդեգրել ցանկացող օտարերկրացին որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում դիմում է կենտրոնական մարմին, որը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է նախարարությանը», ՀՀ ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այն է «...օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության երեխայի որդեգրման դեպքում անհրաժեշտ է կենտրոնական մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին», ինչպես նաև ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի պահանջները, այն է՝ «որդեգրման դիմումին պետք է կցվեն Կառավարության լիազորած մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը (անձինք) ներկայացրել է (են) եզրակացությունն ստանալու համար», կազմել և գործակալության պետ Անի Միհիթարյանի հաստատմանն է ներկայացրել որդեգրման գործընթացի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ «Իտալիայի Հանրապետության քաղաքացիներ Ֆեդերիկո Տատա Նարդինիի և Սիլվիա Պիկկալուգայի կողմից ՀՀ քաղաքացի Արեգ Ավետիսյանի որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին» եզրակացություն՝ դրա հիմքում և բովանդակությունում դնելով կեղծ տեղեկություններ՝ Ֆեդերիկո Տատա Նարդինիի և Սիլվիա Պիկկալուգայի կողմից նույն մանկատան մեկ այլ սան, 2018 թվականի փետրվարի 12-ին մահացած Կարեն Հովհաննիսյանին տեսակցելու և նրան ընտրելու վերաբերյալ դիմումները՝ այդ կերպ հնարավոր դարձնելով օտարերկրյա քաղաքացիների կողմից Արեգ Ավետիսյանի որդեգրումը: Բացի այդ, Ալբերտ Վիրաբյանը, Անի Միհիթարյանին փոխարինելու ժամանակահատվածում, հանդիսանալով ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի պաշտոնակատարը, տեղյակ լինելով, որ յուրաքանչյուր երեխայի որդեգրման համար վերջինիս փոխանցվում է 25.000 եվրո, որն ակնհայտորեն բարձր է Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման գործընթացի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ծախսերի, ինչպես նաև գործընթացների իրականացման համար առաջացած անհրաժեշտ այլ ծախքերի համար պահանջվող գումարների չափերից, գործելով խմբի կազմում, խմբային շահերից ելնելով, ՀՀ կենտրոնական մարմնի անունից ստորագրել է Իտալիայի քաղաքացիներ Ֆրանչեսկա Դի Մարիայի և Էրոս Մոնտալբանոյի կողմից ՀՀ քաղաքացի Էլինա

Խաչատրյանի որդեգրման համար էական նշանակություն ունեցող՝ այդ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացություն:

Նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին՝ խաթարվել է որդեգրումների օրինական գործընթացը, հեղինակազրկվել է Կենտրոնական մարմինը և արատավորվել վերջինիս բարի համբավը (…)»[3]:

5.3. Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Լենա Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, այն բանի համար, որ. *«(…) նա, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում զբաղեցնելով ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետի պաշտոնը և իրականացնելով կազմակերպական-տնօրինչական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները՝ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և չի կատարել ծառայողական պարտականությունները՝ էական վնաս պատճառելով անձանց իրավունքներին և օրինական շահերին, պետության օրինական շահերին, որն առաջացրել է ծանր հետևանքներ:*

Այսպես.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2008 թվականի ապրիլի 23-ի թիվ 532-Ա/4 հրամանով հաստատվել է քաղաքացիական ծառայող՝ Վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետի պաշտոնի անձնագիրը, որի «Իրավունքները և պարտականությունները» սահմանող 7-րդ բաժնի 11-րդ կետի գ), դ), զ) ենթակետերը, 2-րդ բաժնի 6-րդ կետի ա) ենթակետը նախատեսում են, որ Բաժնի պետը կազմակերպում և ղեկավարում է որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողի թեկնածուների, որդեգրողների և որդեգրված երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացումը, կազմակերպում և համակարգում է

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 70, թերթ 52-54:

առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառումը, համակարգում և կազմակերպում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ընտանիքում և մանկատներում, պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Հիշյալ պարտականությունները սահմանվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1139-Ա/4 հրամանով: Նույն հրամանի 6-րդ բաժնի 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Բաժնի պետը՝ ունի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի, (..), Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 269-Ն որոշման (...) և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն» (...):

Նախարարության կողմից 2003 թվականից ներդրվել և գործարկվել է որդեգրման թեկնածու հանդիսացող երեխաների կենտրոնացված հաշվառման նպատակին ծառայող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգը /այսուհետ՝ նաև «Մանուկ» համակարգ կամ ՏՀ/: ՏՀ շահագործումը վերապահվել է Վարչության՝ երեխաների հիմնահարցերի բաժնին:

Լենա Հայրապետյանը, 2000 թվականից մինչև 2019 թվականի ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում անընդմեջ զբաղեցրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետի պաշտոնը, այսինքն, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ իրականացրել է կանոնադրությամբ ու անձնագրով սահմանված կազմակերպական-տնօրինչական գործառույթներ: Իրեն վերապահված այդ գործառույթների շրջանակում Լենա Հայրապետյանը «Մանուկ» համակարգի շահագործումը, որդեգրման ենթակա և որդեգրված երեխաների, որդեգրողի թեկնածուի և որդեգրողի վերաբերյալ տեղեկատվության մասով, դրել է իր ենթակայության տակ գտնվող բաժնի կոնկրետ աշխատակցի՝ Անուշ Բաղալյանի վրա, միաժամանակ անձամբ, իբրև նրա վերադաս, հասանելիություն է ունեցել դրան: Հետագայում, Լենա Հայրապետյանը դիտավորությամբ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր մտերիմ՝ Իտալիայի Հանրապետությունում հավատարմագրված «Արկոբալենո Օնլուս», «Ֆամիլիա Ինսիեմե Օնլուս» և «Անպաս Օնլուս» կազմակերպությունների ներկայացուցչի գործառույթներ իրականացնող Անուշ Գարսանցյանի կողմից օտարերկրյա որդեգրումների իրականացման խոչընդոտներ չառաջացնելու շարժառիթով, պատշաճ կերպով հսկողություն չի իրականացրել ՏՀ շահագործման նկատմամբ: Մասնավորապես, չի ստուգել համակարգ մուտքագրված տվյալների աղբյուրն ու հավաստիությունը, անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել այլ անձանց կողմից այդ համակարգին հասանելիությունը բացառելու ուղղությամբ՝ կոնկրետ աշխատակցի փոխարեն հնարավոր դարձնելով բաժնի մյուս բոլոր աշխատակիցների հասանելիությունը կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգին: Լենա Հայրապետյանի անգործության հետևանքով համակարգ են մուտքագրվել համապատասխան երեխաների, նրանց որդեգրելու ցանկություն հայտնած թեկնածուների անհրաժեշտ ոչ բոլոր տվյալները, որդեգրման գործընթացի վերաբերյալ մյուս տվյալները լրացվել են թերի և սխալ՝ իրականում որդեգրման գործընթացի կասեցված չլինելու պայմանում համակարգում մուտքագրվել է որդեգրման կասեցում: Արդյունքում, որդեգրելու ցանկություն հայտնած և որպես

թեկնածու հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կոնկրետ դեպքերի մասով ստացել են ոչ ամբողջական և խեղաթյուրված տեղեկություն, դրանց հիման վրա կայացրել կանխորոշող՝ չարդարացված որոշումներ, զրկված են եղել իրենց հասանելի ամբողջական և ճիշտ տեղեկատվությունն ստանալու հնարավորությունից, որի արդյունքում խոչընդոտվել է նրանց՝ որդեգրման իրավունքը:

Լենա Հայրապետյանի անգործության արդյունքում իր ենթակա բաժնի աշխատակիցներից Անուշ Բադալյանը, «Մանուկ» համակարգում իր անվամբ ստեղծված «ANUSH BADALYAN» օգտատիրոջ միջոցով ունենալով հասանելիություն և իրավասություններ որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ անհրաժեշտ նշումներ և փոփոխություններ կատարելու համար, խախտել է ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի՝ «Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 269-Ն որոշման 40-րդ, այն է՝ «Հաշվառված՝ որդեգրել ցանկացող անձանց կողմից որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում սույն կարգի III գլխում նախատեսված դեպքերում աշխատակազմը (ՀՀ ԱՍՀ նախարարության), իսկ սույն կարգի IV գլխում նախատեսված դեպքերում կենտրոնական մարմինը նախարարությանը գրավոր տեղեկացնում է դրա մասին և, եթե այլ որդեգրել ցանկացող անձ ընտրված երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել, ապա կազմակերպում է որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի հանդիպումը», և 41-րդ կետի, այն է՝ «Սույն կարգի 40-րդ կետով նախատեսված տեղեկատվությունն ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում նախարարությունը կատեցնում է որդեգրման ենթակա երեխայի տվյալների տրամադրումը»

պահանջները, տվյալ համակարգում 2019 թվականի մարտի 11-ի նշագրումով անհիմն կասեցրել է «Երևանի «Մանկան տուն»» ՊՈԱԿ-ի սան, որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառված Անի Արամի Հակոբյանի (ծնված՝ 10.09.2018թ.) վերաբերյալ տվյալները, որի հետևանքով ՀՀ քաղաքացի հանդիսացող, երեխա որդեգրելու նպատակով հաշվառված քաղաքացիների համար նրա տվյալները դարձել են անհասանելի, իսկ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիներ Հերմինե Բաբաջանյանը և Մամբրե Անտոնյանը Երևանի քաղաքապետարանից տեղեկացվել են, որ չեն կարող որդեգրել իրենց կողմից ընտրված Անի Արամի Հակոբյանին՝ վերջինիս տվյալների կասեցված լինելու պատճառով:

Ավելին, ՀՀ կառավարության նույն որոշման 5-րդ բաժնի 35-րդ կետով սահմանված է. «Որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և օտարերկրացիները՝ կենտրոնական մարմին»: Լենա Հայրապետյանը, դիտավորությամբ խախտելով ՀՀ կառավարության հիշյալ որոշման 35-րդ կետով սահմանված պահանջը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր մտերիմ՝ Իտալիայի Հանրապետությունում հավատարմագրված «Արկոբալենո Օնլուս», «Ֆամիլիա Ինսիեմե Օնլուս» և «Անպաս Օնլուս» կազմակերպությունների ներկայացուցչի գործառույթներ իրականացնող Անուշ Գարսանցյանի կազմակերպմամբ օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի՝ որդեգրման ենթակա երեխաների որդեգրումներն անխոչընդոտ իրականացնելն ապահովելու շարժառիթով, վերջինիս պահանջով ընձեռել է հնարավորություն՝ տիրապետել այնպիսի տվյալների, որոնց տիրապետելու իրավասությունը Անուշ Գարսանցյանը չի ունեցել: Մասնավորապես, Լենա Հայրապետյանի կողմից ինչպես անձամբ, այնպես էլ Բաժնի աշխատակցի միջոցով որդեգրման ենթակա, հատկապես՝ կենտրոնացված հաշվառման վերցնելուց հետո 3 ամիսը լրացած երեխաների վերաբերյալ տվյալներ են տրամադրվել Անուշ Գարսանցյանին, ով նշված տեղեկատվությանը օրենքով սահմանված կարգի

խախտմամբ և ժամանակից շուտ փիրապետելու արդյունքում հնարավորություն է ստացել արագացնել օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի՝ որդեգրման ենթակա երեխաների որդեգրման անվան ներքո վաճառքը:

Բացի այդ, Լենա Հայրապետյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, պատասխանատվություն կրելով օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրները լուծելու փոխարեն, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր մտերիմ Անուշ Գարսանցյանի կողմից կազմակերպվող՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի՝ որդեգրման ենթակա երեխաների որդեգրումներն անխոչընդոտ իրականացնելն ապահովելու շարժառիթով, ժամանակ առ ժամանակ կատարել է Անուշ Գարսանցյանի պահանջները: Մասնավորապես, վերջինիս պահանջով 2019 թվականի փետրվարի 20-ին զանգահարել է «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Գևորգյանին և խնդրել՝ խոչընդոտել մանկատուն այցելած՝ երեխաներին ընտանիքներ վերադարձնելու նախաձեռնությամբ զբաղվող, քննությամբ չպարզված անձի կողմից իր նախաձեռնությունն իրականացնելուն, չթույլատրել նրան մուտք գործել մանկատուն և այլ եղանակով խոչընդոտել, որպեսզի որդեգրման հերթում գտնվող երեխաները չվերադարձվեն ծնողներին: Նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին և անձանց իրավունքներին ու օրինական շահերին՝ խաթարվել է որդեգրումների օրինական գործընթացը, հեղինակազրկվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և արատավորվել վերջինիս բարի համբավը, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝ երեխա որդեգրելու համար հաշվառված անձինք զրկվել են Անի Հակոբյանին որդեգրելու համար ընտրելու, տեսակցելու, հետագայում՝ նրան որդեգրելու հնարավորություններից, խաթարվել է պետության կողմից իր քաղաքացիների հանդեպ ստանձնած հանձնառությունը՝ պատշաճ կերպով իրականացնել որդեգրման գործընթացը և ապահովել առանց ծնողական խնամքի մնացած

երեխաների լավագույն շահի վերականգնումը՝ նրանց՝ ընտանիք վերադարձնելու միջոցով, իսկ Լենա Հայրապետյանի մտերիմ Անուշ Գարսանցյանի կողմից ստեղծված և ղեկավարած կազմակերպված խմբի կողմից անխոչընդոտ կատարվել է ծանր հանցանք՝ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ՀՀ տարածքում գործող մանկատներում գտնվող 2 և ավելի երեխաների վաճառք (…)»[4]*:*

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Քրեական նոր օրենսգիրք) տեղ գտած նորամուծությունների, հայեցակարգային փոփոխությունների ու նոր կարգավորումների պայմաններում տեղին է զուգահեռներ անցկացնել Քրեական նոր օրենսգրքի 441-րդ հոդվածով սահմանված վարքագծի համապատասխան կանոնների ու 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308 և 309-րդ հոդվածներով սահմանված վարքագծի կանոնների միջև, որի արդյունքում անհրաժեշտ է փաստել հետևյալը. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված իրավական նորմի կենտրոնական մասում ամրագրված է բուն վարքագծի կանոնը, այն է՝ «Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ (1) շահադիտական, (2) անձնական այլ շահագրգռվածությունից կամ (3) խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին», իսկ հանցակազմի որակյալ տեսակը պարունակում է հետևյալը. «Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի դիսպոզիցիայում սահմանված վարքագծի կանոնները շարադրվել են հետևյալ խմբագրմամբ. «Պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին», իսկ

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 73, թերթ 47-52:

հանցակազմի որակյալ տեսակը պարունակում է հետևյալը. «Նույն արարքը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի դիսպոզիցիան շարադրվել է հետևյալ խմբագրմամբ. «Պաշտոնապար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին», իսկ որակյալ տեսակը պարունակում է հետևյալը. «2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, 2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, 3) կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, 4) կատարվել է մի խումբ պաշտոնապար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ 5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք (...) 3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածների դիսպոզիցիաներում շարադրված արարքների հանցավորությունը կամ պատժելիությունը չի վերացել քրեական օրենսգրքով, որն ուժի մեջ է մտել հիշյալ հոդվածներով սահմանված արարքները կատարելուց հետո, քանի որ Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած 441-րդ հոդվածի դիսպոզիցիայում սահմանված վարքագծի կանոնները մեկ հանցակազմի ներքո միավորել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը՝ պատասխանատվություն սահմանելով պաշտոնապար անձի կողմից ինչպես պաշտոնեական դիրքի չարաշահում, այնպես էլ լիազորությունների անցում կատարելու համար: Միաժամանակ ուշագրավ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը չունի ՀՀ

քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որակյալ հատկանիշը, այսինքն՝ քրեական գործի ընդդատության վերաբերյալ հարցի լուծման ելակետն է այն հանգամանքը, որ Անի Միսիթարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, Ալբերտ Վիրաբյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Լենա Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, որպիսի պայմաններում անհնար է Քրեական նոր օրենսգրքի N 1 հավելվածում սահմանված պայմանը, այն է՝ «Պաշտոնապար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է (...) բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)» վերագրել սույն գործի ընդդատությանը, քանի որ նշվածը վերաբերում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որակյալ հատկանիշին, որպիսի պայմաններում անհրաժեշտ է առանձին փաստել արդյո՞ք արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով, թե բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, եթե արարքին տրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված իրավական գնահատական, ապա պարտադիր չէ, որ արարքը կատարված լինի նաև բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, որ թույլատրվի լուծել քրեական գործի ընդդատության հարցը, այսինքն՝ եթե արարքը կատարվել է միայն ոչ շահադիտական դրդումներից ելնելով, ապա հնարավոր է քննարկել և լուծել վարույթի ընդդատության հարցը, քանի որ Քրեական նոր օրենսգրքի 441-րդ հոդվածը մեկ հանցակազմի ներքո միավորել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը, սակայն «բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով» եզրույթը պատկանում է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 308-րդ հոդվածին, որի հատկանիշներով մեղադրանք է առաջադրվել Անի Միսիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին ու Լենա Հայրապետյանին, այսինքն՝ մեղադրանք առաջադրելու

պահին քրեական գործով վարույթը կարգավորվել է քրեական դատավարության այն օրենսգրքով, որը գործել է համապատասխանաբար հետաքննության կամ նախաքննության ժամանակ, որի ընթացքում առերևույթ արարքը համարվել է հանցանք, իսկ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Ինչ վերաբերում է «բացառությամբ երբ արարքը կատարվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով» եզրույթին, ապա այն վերաբերում է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 309-րդ հոդվածին:

5.4. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Անի Միհթարյանին ու Ալբերտ Վիրաբյանին վերագրվում է, որ նրանք ենթադրյալ արարքը կատարել են խմբային շահերից ելնելով, իսկ Լենա Հայրապետյանին վերագրվում է, որ ենթադրյալ արարքը կատարել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, բայց մեղադրանքներում առկա չէ այն փաստական տվյալը կամ ձևակերպումը, որ ամբաստանյալներն արարքը կատարել են հենց շահադիտական դրդումով:

- Անուշ Գարսանցյանի մեղադրանքում բացակայում է այն ձևակերպումը, որ նա ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Հատկանշական է, որ Քրեական նոր օրենսգրքի հավելված N 1 համաձայն՝ «Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)», այսինքն՝ հարկ է փաստել, որ ենթադրյալ արարքը Քրեական նոր օրենսգրքի հավելված N 1 ցանկով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների շարքին դասելու համար անհրաժեշտ է, որ այն կատարվի միայն շահադիտական դրդումներից ելնելով, որը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից

խուսափելու համար կատարելով, իսկ Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին ու Լենա Հայրապետյանին առաջադրված մեղադրանքներում բացակայում է այն փաստական տվյալը կամ ձևակերպումը, որ ամբաստանյալներն արարքը կատարել են շահադիտական դրդումով:

6. Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը, որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը հաշվի առնելով քրեական գործով քննության առարկան հանդիսացող հանցագործությունների բնույթը և մինչդատական վարույթում ամբաստանյալներին մեղսագրված արարքների քրեաիրավական որակումները, այն է՝ Անուշ Գարսանցյանին առաջադրված մեղադրանքի համաձայն՝ նրա կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին ու Լենա Հայրապետյանին առաջադրված մեղադրանքների համաձայն՝ վերջիններս ենթադրյալ արարքը կատարվել են ոչ շահադիտական դրդումներից ելնելով, ուստի Դատարանը գտնում է, որ ՀԿԴ/0090/01/22 քրեական գործն այլևս ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի անհրաժեշտ է ՀԿԴ/0090/01/22 քրեական գործը փոխանցել ըստ ընդդատության (...)»[5]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Վերոգրյալ իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում,*

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 87, թերթեր 286-300:

որ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով սահմանված է կոռուպցիոն հանցագործությունների շարքում ներառված ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածում առկա բացառությունը, որը վերաբերում է այն դեպքերին, երբ պաշտոնապար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով սահմանված արարքը չի համարվում կոռուպցիոն բնույթի հանցանք հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝ երբ պաշտոնապար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով սահմանված, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով նախատեսված բացառությունը չի առնչվում Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին և Լենա Հայրապետյանին առաջադրված մեղադրանքներին, քանի որ նրանցից որևէ մեկին մեղադրանք չի առաջադրվել որպես պաշտոնապար անձ՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու համար՝ ոչ շահադիտական դրդումներից ելնելով <u>և</u> միաժամանակ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Այսպիսով, թիվ ԵԴ/0936/01/22, ՀԿԴ/0090/01/22 քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, ուստի Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում այս քրեական գործն առարկայական ընդդատության

պատճառաբանությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելուն (…)»[6]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[7]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 88, թերթեր 20-26:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[8]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[9]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

(…)

*2) «**Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը»** բառերից հետո լրացնել «(բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)» բառերով. (…)»:*

13.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում*

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

(…)

4. Եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու»

շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով»:

13.3. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածը, որը համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներին, չի համարվում կոռուպցիոն բնույթի հանցանք՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, երբ արարքը կատարվել է՝ ա) ոչ շահադիտական դրդումներից ելնելով, բ) բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով: Հետևաբար, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, հանցանքը համարվում է կոռուպցիոն բնույթի և ենթակա չէ փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ ենթադրյալ արարքը Քրեական օրենսգրքի հավելված N 1-ով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների շարքին դասելու համար անհրաժեշտ է, որ այն կատարվի միայն շահադիտական դրդումներից ելնելով, իսկ Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին ու Լենա Հայրապետյանին առաջադրված մեղադրանքներում բացակայում է այն փաստական տվյալը կամ ձևակերպումը, որ ամբաստանյալներն ենթադրյալ հանցանքները կատարել են շահադիտական դրդումով, գտել է, որ թիվ ՀԿԴ/0090/01/22 վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[10]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով սահմանված բացառությունը չի առնչվում Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին և Լենա Հայրապետյանին, քանի որ նրանցից որևէ մեկին մեղադրանք չի առաջադրվել որպես պաշտոնատար անձ՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու համար՝ ոչ շահադիտական դրդումներից ելնելով և միաժամանակ

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով[11]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Անի Մխիթարյանին, Ալբերտ Վիրաբյանին և Լենա Հայրապետյանին առաջադրված մեղադրանքների բովանդակությունից երևում է, որ *«բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելու»* հատկանիշ վեջիններիս մեղսագրված չէ, հետևաբար նշված պայմանի բացակայության պայմաններում արարքը շարունակում է համարվել կոռուպցիոն բնույթի:

Հետևաբար, գտնում ենք, որ սույն վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

16. Միևնույն ժամանակ, անդրադառնալով Հակակոռուպցիոն դատարանի այն դատողությանը, որ *«բացառությամբ երբ արարքը կատարվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»* եզրույթը, վերաբերում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, այլ 309-րդ հոդվածին, հարկ է նշել, որ այն հիմնավոր չէ, քանի որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նման բացառություն սահմանված չէ:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

18. Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ թիվ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

---

[11] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Անուշ Մարտիրոսի Գարսանցյանի վերաբերյալ երկու դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Անի Աշոտի Մխիթարյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով, Ալբերտ Սոսի Վիրաբյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով, Լենա Հրաչիկի Հայրապետյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և մյուսների վերաբերյալ թիվ ԵԴ/0936/01/22 (ՀԿԴ/0090/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԵԼԻԶԱՎԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ